— Բայց դուք այն հարցրէք, — նկատեց մեր հիւրընկալը, — թէ այդքան բնակիչներից որքա՞նն է իր հայրենի հողի վրայ բնակւում: Կարելի է ասել, որ կէս մասը պանդխտութեան մէջ է ապրում:

— Պանդխտութեան մէջ ի՞նչ են շինում:

— Համալսարաններ են անում:

— Անբա՜խտ Տարօն, — բացականչեց վշտացած երիտասարդը տխուր ձայնով, — քո գիւղացին առաջ գնում էր օտար երկրում կայսր էր դառնում, իսկ հիմա գնում է համալ է դառնում...

Մեր հիւրընկալի բարի աչքերը զարմանքից լայնացան: Զարմացայ եւ ես:

— Ինչո՞ւ էք զարմանում, — դարձաւ նա դէպի մեզ, — յունաց երեւելի Վասիլ կայսրը, որ Կ.Պոլսում գահ նստաւ 867 թոին, Տարօնի Թիլ աւանիցն էր: Նրա թոռ Կոստանդին Պերփեռուժեն կայսրը նոյնպէս նշանաւոր եղաւ, որպէս իր պապը, եւ գրեց նրա պատմութիւնը, որ լի է բազմաթիւ մեծագործութիւններով: Հայաստանը շատ կայսրներ ու մեծ զօրապետներ է տոել թէ՛ Հռոմին եւ թէ՛ Բիւզանդիային, ուր նրա որդիները այժմ գնում են, համալսարաններ անում:

Ճրագի լոյսը լուսաւորում էր նրա գունաթափ դէմքը, որի վրայ յայտնոեցաւ մի թեթեւ կարմրութիւն: Նա հանեց ծոցի գրպանից մի փոքրիկ գրքոյկ, ինչպէս բողոքականի քարոզիչը ամէն դէպքում դուրս է բերում ծոցի աւետարանը: Նրա ձեռքերը զգալի կերպով դողում էին: Երեւում էր, որ մեր հիւրընկալի հաղորդած թոանշանները աւելի գրգռեցին նրա տխուր զգացմունքները: Մենք ամէնքս նայում էինք նրա երեսին: Նա թերթում էր փոքրիկ գրքոյկը եւ մատիտով մի պատառ թղթի վրայ նշանակում էր իր դիտողութիւնները: Երբ վերջացրեց, գլուխը վեր բարձրացրեց, ասելով.

— Ի՜նչ մեծ տարբերութիւն... այդ սարսափելի՜ է:

Ասլանը այնպիսի հիացմունքով նայում էր նրա վրայ, ինչպէս մի մեծ եղբայր, որ ուրախանում է կրտսերի առաջադիմութեամբ:

Երիտասարդը դարձաւ դէպի մեր հիւրընկալը:

— Մեր հին պատմաբաններից մէկը, Զենոբ Գլակը, թողել է մեզ մի քանի հետաքրքիր թոանշաններ, որոնցից կարելի է եզրակացնել, թէ որքան մեծ բազմամարդութիւն է ունեցել Տարօնը առաջ եւ որքան փոքրացել է նրա բնակիչների թիւը այժմ: Պէտք է գիտենաք, որ Զենոբ Գլակը Լուսաւորչի ժամանակակից էր եւ նրա նշանաւոր եպիսկոպոսներից մէկը, որին Լուսաւորիչը Տարօնի Ս. Կարապետ վանքի առաջին վանահայր կարգեց: Եւ որովհե-